

2024

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Կաթնաղբյուր
բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ
ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Կաթնաղբյուր բնակավայր

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ տնօրեն

Գ. Ազիզյան



Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ.....	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	10
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	10
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	11
1.5.3	<i>Նախատեսվող գործունեության տարածքի գլխավոր հատակագիծ.....</i>	14
1.5.4	<i>Իրավիճակային հատակագիծ.....</i>	16
1.5.5	<i>Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ.....</i>	17
1.5.6	<i>Ժամանակացույց.....</i>	19
1.5.7	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ</i>	20
1.5.8	<i>Զեռուցում , հովացում և օդափոխություն</i>	21
1.5.9	<i>Ֆոտովոլտային արևային համակարգ</i>	23
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	25
2.1	Շինարարության պայմանները.....	26
2.2	Շինարարության ժամկետները.....	27
2.3	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը.....	27
2.4	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	28
2.4.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում</i>	28
2.4.2	<i>Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը</i>	30
2.5	Աղմուկ և թրթռում:.....	31
3.	ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱԶՄԱՊԱՏՈՒՄ	32
3.1	Կանաչ տարածքի ռոռգման ջրապահանջի հաշվարկ.....	35
4.	ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	36
4.1	Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	36
4.2	Սեյսմիկա և երկրաբանություն	37
4.3	Կլիմա.....	38
4.4	Օդային ավազան	40
4.5	Ջրային ռեսուրսներ.....	42
4.5.1	<i>Հողեր, կրոզիա և հողի աղտոտում</i>	43
4.5.2	<i>Կենսաբազմազանություն</i>	45
4.6	<i>Բնության հատուկ պահպանվող տարածքներ</i>	49

4.6.1	<i>Բնության հուշարձաններ</i>	49
4.7	<i>Պատմամշակութային հուշարձաններ</i>	50
4.8	<i>Թափոնների կառավարում</i>	51
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	52
5.1	<i>Ռիսկերի գնահատում</i>	53
5.2	<i>Արտանետումների աղբյուրները</i>	53
5.3	<i>Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն</i>	53
5.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	53
5.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	54
5.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	54
5.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	54
5.3.5	<i>Հակահրդեհային միջոցառումներ</i>	55
5.3.6	<i>Աղմուկ և թրթռում</i>	56
5.3.7	<i>Թափոնների կառավարում</i>	56
5.3.8	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	57
5.3.9	<i>Էներգախնայողության միջոցառումներ</i>	57
6.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	58
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	59
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	61
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	63

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող`	«ՀԱՅՆԱԽԱԳԻԾ» ԲԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն`	Ք. Երևան, Չարենցի փ. 1
Նախատեսվող գործունեության հասցեն`	ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Կաթնաղբյուր բնակավայր
Հեռախոս`	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ` Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ` Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ` Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ` պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Սույն հաշվետվությունը մշակված է **ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Կաթնաղբյուր բնակավայր** 144 աշակերտական տեղով երկհարկանի միջնակարգ դպրոցի մասնաշենքի և 40 երեխայի համար մեկ հարկանի մանկապարտեզի մասնաշենքի կառուցման համար:

Օրագրի նպատակն է Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում առաջնահերթ համարվող դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Դպրոցներն ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Օրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Կրթահամալիրի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Կաթնաղբյուր բնակավայրում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Կաթնաղբյուր բնակավայր նախատեսվող կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Մահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023թ.) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող

գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի,

պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

«Բնության հաստուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք

ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի Ա 781-Ն որոշում

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի 71-Ն որոշում

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 72-Ն որոշում

«ՀՀ ջրային օրենսգիրքը» ենդունված 2002 թվականի հունիսի 4-ին, որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Կրթահամալիրի կառուցման համար նախատեսված տարածքը գտնվում է **ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Կաթնաղբյուր բնակավայրում:**

Կաթնաղբյուր գյուղը Ստեփանավան քաղաքից գտնվում է մոտ 18.0 կմ հեռավորության վրա դեպի հյուսիս-արևմուտք :

Հատկացված տարածքը գտնվում է գոյություն ունեցող գյուղի հարավ-արևմտյան մասում:

Հայցվող տարածքը բաղկացած է երկու հողակտորից, գումարային մակերեսը կազմում է 21717.9 ք.մ:

ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Հասցե՝ Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան գյուղ Կաթնաղբյուր 8-րդ փողոց 1-ին նրբանցք 1

Կադաստրային ծածկագիրը՝ 06-051-0028-0001

Մակերեսի չափը (հա)՝ 1.74229

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողակտորը ծանրաբեռնված է հին դպրոցի շենքով /3938.քմ/, որը ենթակա է քանդման:

Հասցե՝ Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան գյուղ Կաթնաղբյուր 9-րդ փողոց 3 հողամաս

Կադաստրային ծածկագիրը՝ 06-051-0028-0011

Մակերեսի չափը (հա)՝ 0.4295

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեղամասի ռելիեֆի մակերևույթի բացարձակ նիշերը տատանվում են 1606-1613մ սահմաններում:

Տարածքը համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 նորմերի գտնվում է 3-րդ գոտում / $a = 0.5g$ / գրունտային պայմանները ըստ սեյսմիկ հատկությունների 2-րդ կարգի:

Համաձայն առաջադրանքի բացի դպրոցի և մանկապարտեզի մասնաշենքերից տարածքում տեղադրված է ֆոտովոլտային արևային մարտկոցներ 150կվտ հզորությամբ և սահմանազատված է մետաղական ճաղաշարով իր ենթակայանով 400Կվա հզորությամբ, կոյուղու մաքրման կայանը մաքրված ջրի ավազանով, ջերմոց և մարզադաշտ 20 x 40 մ իր 120 նստատեղով:

Հողամասի արևելյան հատվածում տեղադրված են արևային մարտկոցները, որի տարածքը կազմում է 3036.89 ք.մ:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 8480.95մ³: Շինարարական աշխատանքների ընթացքում այն կպահվի ծածկված վիճակում, այնուհետև կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատումներ չի ունենալու:

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են:

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Կրթահամալիրի

Դպրոցները նախագծվել են Հայաստանի գյուղական վայրերի համար:

Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից երկհարկամի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունի դահլիճի մասնաշենքից և մեկ հարկանի մանկապարտեզից:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.7մx18.0մ Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ:

Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կակինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը:

Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4մ, որը օգտագործվելու է որպես թաքստոց:

Նկուղային հարկում նախատեսված է գրադարան, խոհանոց, բուժկետ, պահոցներ, տղաների և աղջիկների սանհանգույցներ, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան:

Բոլոր հարկերը այդ թվում թաքստոցը իրար հետ կապված են աստիճանների միջոցով և վերելակով, նախատեսված հենաշարժական խախտումներ ունեցող հաշմանդամ անձանց համար:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսոլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօդյա միջոցառումների համար :

Դպրոցին կից նախագծված է մեկ հարկանի մանկապարտեզ, բաղկացած 2 հաս 20 տեղանոց խմբակային բջիջներից: Խմբերը համալրված են հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սան. հանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակ:

Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Ճակատի խրիսիային մասը երեսապատված է բազալտե սալերով:

Նախագծով նախատեսված է ճաատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկությամբ:

Մարզասրահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենքի մուտքերը շեշտված են ֆիբրոցեմենտային այլ երանգի սալերով:

Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է:

Արտաքին դռները այլումինե ջերմակամրջակով են՝ ներկված մուգ մոխրագույն գույնով:

Արտաքին պատուհանագոգերը, հովհարը, քիվերը, դռների և պատուհանների շեպերը երեսապատել այլուկաբոնդով: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է 4.0 x 8.0մ ջերմոց, 26x14մ բաց ցանկապատված մարզադաշտ, 100մ երկարություն ունեցող վազբուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար

ցանկապատով տարածք :

Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է

Համաշինարարական աշխատանքները կատարել ՀՀՇՆ 3.03.01-87-ով

Նախագիծը մշակված է համաձայն

ՀՀՇՆ 30-01-2014 Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն

ՀՀՇՆ 31-03.01-2014 ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ

ՀՀՇՆ 31-03.04-2024 «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՆՔԵՐ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից կմշակվի համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

	Ցուցանիշի նկարագրում	Չմոտես Միավոր	Քանակ
1	ԴՊՐՈՑԻ ԳՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ)	ԱՇԱԿԵՐՑ	ՄԻՆՉԵՎ 144
2	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ)	ԵՐԵՆԱ	ՄԻՆՉԵՎ 80
3	ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	21717,90
4	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	2055,04
5	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏՈԿՈՍԸ	%	9,46
6	ՇԵՆՔԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	3634,80
7	ԿՐԹԱԳԱՄԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	3620,50
8	ԿՐԹԱԳԱՄԱՆԻ ՕԳՏԱԿԱՐ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	3248,80
9	ԿՐԹԱԳԱՄԱՆԻ ՄԱԿԵՐԵՍԸ 0,000 ՆԻՇՈՒՄ	ՔՄ	1890,40
10	ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱԿԱՆԸ	ԽՄ	16436,60
11	ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	ՔՄ	11485,46
12	ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՏՈԿՈՍԸ	%	52,90
13	ԲԱՑ ՄՊՈՐՏԳՐԱՊԱՐԱԿ	ՔՄ	540,00
14	ԱՐԵՎԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆ	ՀԱՏ/ՔՄ	286/4433,30
15	ԱՐԵՎԱՅԻՆ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԻ ԳՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ	ԿՎտ	150
16	ԼՐԱԿԱԶՄ ՏՐԱՆՏՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ԳՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ	ԿՎԱ	400
17	ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՐԻՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՀԱՏ	9
18	ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ԳՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ	լ/վրկ	3
19	ՋԵՐՄՈՑ	ՔՄ	32
20	ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱԳՐԱՊԱՐԱԿՆԵՐ	ՔՄ	241,70

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Գազամատակարարման, էլեկտրոմատակարարման և ջրամատակարարման համար կառուցապատողը դիմել լիազորված մարմիններին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

1.5.4 Իրավիճակային հատակագիծ

ՀՊՐԱՍՏԱՌ ՀԱՏԱԿԱԳԻԾ
ԼՈՒՌ ՍԱՐԶ
ԳՅՈՒՂ ԿԱՅԱԿԱՆՈՒՄ

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
M 1:2000

ԴՆՏԱՐԿԱՌ ՏԱՐԱԾԸ

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
M 1:500

ԴՆՏԱՐԿԱՌ ՏԱՐԱԾԸ

Կատարող
Исполнитель

0025 Դարաստանի Դանրաբնակարան
ք. Երևան, Չարենցի 1
Էլ. փոստ info@ampproject.am
0025 Республика АРМЕНИЯ
г.Ереван ул. Чаренца 1
Эл.почта info@ampproject.am

Պատվիրատու
Заказчик

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՇԵԱՅԻՆ
ՋԱՂԳԱՏԱՆ ՔԻՄԱՆՈՂՐԱՄ**

Կառվարող
«ԷՆԵՐԳՈ ՀԻՆ ԴԵՆՈՒՄ» ՍՊԸ

Կառնաճի անվանումը
144 ԱՇԽԱԿՆԻՏԻ ՀԱՄԱՐ ԿՐԹԱՀԱՍՏԱՆԻՐԻ
ՏՊՊԱՅԻՆ ԿԱՅԱԿՈՒՄ

Наименование проекта
Типовые проекты
общеобразовательного комплекса на
144 ученика

144 ԱՇԽԱԿՆԻՏԻ ՀԱՄԱՐ ԿՐԹԱՀԱՍՏԱՆԻՐԻ
ՏՊՊԱՅԻՆ ԿԱՅԱԿՈՒՄ ՏԵՄԱԿԱՌՈՒՄ
ՀՀ ԼՈՒՐԻ ՍԱՐԶԻ ԿԱՅԱԿԱՆՈՒՄ
ՔԱՎԱՍԱՅՐՈՒՄ

Привязка типового проекта
общеобразовательного комплекса
в селе Катнахорор Лорисского марза

Փուլ Ступень	Կես Часть	Ալբոմ Альбом	Պար Колл.	Ֆուտեր Том
ԱՄ РП1	ԳԴ ГП	1		

Կառնաճի անվանում
Наименование чертежа

**ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
СИТУАЦИОННЫЙ ПЛАН**

Ձևաչափ
Чертеж

1 Էլ. ֆայլ
Эл. файл

G100.03

Մասշտաբ
Масштаб

1:2000, 1:500

Կատարող ըստի անվանումը
Наименование исполнительного органа

Վ. Արխիպովի ճարտարապետական
արվեստանոց

Архитектурная мастерская А. Айвазяна

ԼԳԲ ГАП	Այվազյան Ռ. Айвазян Р.
ԼԳՔ ГИП	Յանյան Ա. Джаныш А.
Սար. Рук. отн.	Այվազյան Վ. Айвазян А.
ՎՃ.Կրկնադր. Г.А.констр.	Սողոմոնյան Վ. Согомонян А.
Լախնագծիչ Проектир.	Այվազյան Ռ. Айвазян Р.
Ստուգիչ Проверил	Այվազյան Վ. Айвазян А.

Պատվիր
Заказ

ԿՊՈՒՈՒԶ4


անվանում Дата	արվելի Архит. номер	գրքահամար Итого номер
	3585	


Փոփոխություններ
Изменения

3	
2	
1	
0	2024.11.05

Էջ стр.	3	Ֆորմատ Формат	A2
------------	---	------------------	----

1.5.5 Շինարարական աշխատանքների կազմակերպման հասակագիծ





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ


	Կառուցվող շինություններ
	Ժամանակավոր տեղադրվող մետաղե վահանակային պատ
	Անվտանգ հետիոտն ճանապարհ
	Շին հրապարակ մուտք ելք
	Ավտոմեքենաների շրջադարձի տեղամաս
	Աշխատանքային վտանգավոր գոտու սահմանագիծ
	Ավտոտրանսպորտի լվացման կետ
	Հակահրդեհային վահանակ
	Լուսարձակներ
	Ժամանակավոր տաղավարներ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

№ ո/ո	Անվանում	Մակնիշ	Քան.	Ծանոթություն
1	Ավտոկտուն	ԿՇ-65713-1	1	
2	Ինքնաքափ ավտոմոբիլ	MA3 5550	2	
3	Բուլդոզեր KOMATSU	PC 400-7	1	
4	Էլ. եռակցման սարք	ՇԽ 500	1	
5	Շարժական կոմպրեսոր	ՅՈՓ - 55 B	1	ըստ պահանջի
6	Էքսկավատոր Hyundai	170W-7	1	
7	Աշտարակային կրունկ	Q7Z-80	1	

ՇՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳԻՐ

№ ո/ո	Անվանում	Չափ. Միավ.	Քան.	Ծանոթություն
1	Գրասենյակ	Հատ	1	
2	Հանդերձարան	Հատ	1	
3	Ճաշարան	Հատ	1	Պատրաստի սնունդ
4	Լոգարան	Հատ	1	
5	Հագուստի չորանոց	Հատ	1	
6	Քիմ զուգարան	Հատ	2	
7	Աղբի տարաններ	Հատ	2	
8	Լուսարձակներ	Հատ	16	
9	Հակահրդեհ. վահանակ	Հատ	3	
10	Թափոնների պահոց	Հատ	2	
11	Նյութերի պահեստ	Հատ	2	
12		Հատ	2	



ՆԳՑ	Ա. ԴՈՒԷՋԱՆՅԱՆ		ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԿՐԹԱՅԱՄԱՆԻՐԻ ՏԻՊԱՅԻՆ /ՄՈՂՈՒԱՅԻՆ/ ՇԵՆՔ, 144 ՏԵՂ	ՊԱՅԻՐԱՏՈՒ ԳՂ ՔՄԱՍԱԿԻ-ԼՈՒԹՅԱՆ ԿՈՒՆՑԵ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ	Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ		ՀՀ Արմավիր մարզի Միտիան համայնք, Ութ ճանապարհ 9-րդ մուտք թիվ 1 հողամաս	ՀԱՌՈՒԹՅԱՄԲ
			ՇՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	ՓՈՒԼ
			ՇՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ 1:500	ԹԵՐԹ
				ՍԵՐԹԵՐ
				Ս.Ն.
				ՇԿ-07
				11
				ԼԻՑԵՆԶԻԱ Դ. 10634 ՔՊԼ 17324
				ԱՐՏՈՆԱԳԻՐ ՃԲԴ - Ա - 0273

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՆԱԽԱՏԵՍԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																							
	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ	ԱՄԻՍ
1. Շին հրահարման կազմակերպում	█																							
2. Ժամանակավոր հեմ. Ցանցերի սնցանում		█																						
3. Հողաձեռն աշխատանքներ		█	█	█	█																			
4. Հիսթերի իրականացում ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ					█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
5. ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ՀԱՐԿԵՐԻ ԶՐԱՍԵԿՈՒՄԱՑՈՒՄ						█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
6. ԳՐՈՒՏՆԵՐԻ ՀԵՏ ԼԻՑԶ և ՏՈՓԱՆՈՒՄ							█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
7. Շենքի վերգետնային կողմ ՏԱՐԱԾՆԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ											█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
8. ՏԱՆԻՔԻ ԱՆԶՐԱՆՑԻԿ ՇԵՐՏԵՐԻ ՊԱՏ.																								█
9. ՊԱՐՓԱԿՈՂ ՊԱՏԵՐԻ ՇԱՐՈՒՄ																								█
10. ՄԻՋՆՈՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																								█
11. ՇՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ																								█
12. ԱՐՏԱՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ						█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
13. ՆԵՐՔԻՆ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ ԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ																								█
14. ԼՈՒՄԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԴՈՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ																								█
15. ՎԵՐԵԼԱԿՆԵՐ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԻԿԱ																								█
16. ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ																								█
17. ԻՆՃ. ԳԾԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏ. ՓՈՐՉԱՐԿՈՒՄ																								█
18. ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՈՒՄ / ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
19. ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍԹԱԹՂԹԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ																								█
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԸՆԹԱՑ	█																							
ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԸՆԹԱՑ						█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█	█
ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓԱՍԹԱԹՂԹԵՐԻ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄ																								█

1.5.7 *Ջրամատակարարում և ջրահեռացում. Ոռոգման համակարգ*

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը (Նախագծային փուլ) իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը:

Կրթահամալիրի ջրամատակարարումը իրականացվելու համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, հողատարածքի հարևանությամբ անցնող ջրագծից /կցված Հավելվածներ բաժնում/:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են՝

1. ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում:
2. ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Տաք ջրամատակարարում:
- Հրդեհամարման համակարգ:
- Կենցաղային կոյուղի:

Ջրամատակարարում

Նախագծվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից $2x(1.7x2.3x1.8m W=7m^3)$, որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում Wilo SiBoost Smart 4 HelixVE 404, Q=5.0լ/վրկ, H=30.0մ, N=4x0.75կՎտ, 3~ 400 V: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմումեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմումեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Հրդեհամարման համակարգ

Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով: Համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված ռեզերվուարներից $2x(1.7x2.3x1.8m W=7m^3)$, որոնցում առկա է հրդեհամարման անհրաժեշտ ծավալը: Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման $\varnothing 76x3$ մմ և $\varnothing 57x3$ մմ տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից: Հրշեջ պահարանները համալրված են հրշեջ ծորակներով և $l=20.0$ մ երկարության փողրակներով:

Կենցաղային կոյուղի

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատավծի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանում կոյուղու ճնշումային սարքավորման

օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում: Wilo DrainLift BOX-32/11HD, Q=2.0լ/վրկ, H=6.0մ, N=0.75կՎտ, 1~ 230 V) Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

Նախատեսվող կոյուղագիծը միանում է տարածքում նոր կառուցվող կոյուղու մաքրման Топак 100 սարքավորմանը:

Սարքավորումը կատարում է եռաստիճան մաքրում՝ մաքրված կեղտաջրերի բնութագրերն են՝ ԹԿՊ20 - 10-20մգ/լ - ի սահմաններում, ԹՔՊ - 70-100մգ/լ -ի սահմաններում, N և NH4 իոնների պարունակությունը 15-20մգ/լ – ի սահմաններում:

Նախագծով նախատեսվում է խրամուղու նախապատրաստական շերտ ավազից 10սմ հաստությամբ, ետլիցք ավազով ձեռքով 0.1մ շերտ առ շերտ տոփանումով d+200մմ, և վերջնական ետլիցք տեղի բնահողից:

Բոլոր համակարգերը մոնտաժից հետո ենթակա են հիդրավիկական փորձարկման՝ համաձայն գործող նորմերի:

- Ոռոգման համակարգ՝

Ոռոգման համակարգը սնվում է տարածքում նախատեսված ռեզերվուարից, որում կուտակվում է մաքրման սարքավորումն միջոցով մաքրված ջուրը: Ջուրը ջրասույգ պոմպի (Гном 16-16)-ի միջոցով մղվում է ոռոգման համակարգ:

Ավելցուկային ջրերի հեռացման համար նախատեսված է դրենաժային հորատանցք 15.0մ խորությամբ Ø160մմ, որի մեջ տեղադրվում է պոլիէթիլենային խողովակ: Խողովակի վրա անհրաժեշտ է բացել անցքեր Ø20մմ տրամագծով, յուրաքանչյուր 1 գծամետրի վրա, թվով 10 հատ:

1.5.8 Ջեռուցում, հովացում և օդափոխություն

1.Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների սիպարային (մոդուլային) շենքի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի շինարարական նորմերի հիման վրա

ա)ՇՆ IV-12.02.01-04 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

բ) ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն"

գ) ՀՀՇՆ II-Պ. 8-71 "Հասարակական սննդի ձեռնարկություն "

դ) ՀՀՇՆ 31-06-2009 "Հասարակական շենքեր և կառույցներ"

ե) ՀՀՇՆ 24.01-2016 "Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների"

Ջեռուցում

- 1.-3.20 հատակագծում ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով :
2. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, երկհարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ:
3. Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են այլումինե ռադիատորներ բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

4. Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:
5. Մենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի:
6. Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով:
7. Մանկապարտեզում և դպրոցում մատակարար խողովակը անցնում է ձեղնահարկով, իսկ հետադարձը՝ +0.100 նիշի հատակի միջով: Սպորտ սրահում և հանդիսությունների դահլիճում մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով:
8. Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:
9. Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքրում:
10. Համակարգերից ջրի դատարկումը կատարվում է կաթսայատնից:

Օդափոխություն

Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով՝

-Մեխանիկական ներածման և արտածման օդափոխություն նախատեսված է նկուղային հարկից (Ն1,Ա1), բուֆետի և քիմիայի կաբինետից (Ն2Ա2), հանդիսությունների դահլիճի համար (Ն4,Ա4) և մարզադահլիճից (Ն3,Ա3): Մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի համակարգերը աշխատում են պարբերաբար ըստ պահանջի:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման –արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով: Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Որպեսզի աշխատող օդափոխիչներից բացառել աղմուկի տարածումը, ներածման և արտածման օդատարների վրա , օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ:

Քիմիայի կաբինետի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական արտածում (Ա19):

Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է Ն2 ներածման համակարգ:

Դպրոցի -3.30 նիշում օդի ներածումը և արտածումը նախատեսված է իրականացնել մեխանիկական դրդմամբ Ն1 Ա1 համակարգով, որի սարքը տեղադրված է ձեղնահարկում: Մենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշված են համաձայն գործող նորմերի:

Ինքնուրույն արտածման համակարգ մեխանիկական դրդմամբ նախատեսված է սան հանգույցներից կանալային օդափոխիչներով:

Ներածման և արտածման օդատարների բոլոր ճյուղավորումների վրա նախատեսված են օդի կարգավորիչ փականներ ձեռքի կարգավորմամբ:

Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն հժՌԿ 2.08.02.-89*:

Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում, իսկ հանդիսությունների դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

ՋԵՐՄԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

1. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի կաթսայատան նախագիծը կատարվել է համաձայն՝

- ա) ջերմային ծախսերի: Տես աղյուսակ N1:
 - բ) ճարտարապետաշինարարական գծագրերի:
 - գ) կաթսայատան տեղակայման նորմերի (ՇՆ և կ II-35-76):
2. Նախագծվող կաթսայատունը սպասարկում է միայն դպրոցին:
3. Ջերմամատակարարման համակարգը փակ է:
4. Ջերմատարը ջուր՝ $t_1=80^\circ\text{C}$, $t_2=65^\circ\text{C}$ (հաշվարկային):
5. Կաթսայատան ջրամատակարարումը՝ ջրմուղից:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

1. Ելնելով ջերմային հաշվարկային ծախսերից նախագծում նախատեսված են երկու ավտոմատացված ջրային էլեկտրոկաթսաներ 120կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը (բոլոր ջերմաստիճանային -15°C , -20°C , -25°C ռեժիմների համար):
2. Կաթսայատանը տեղակայված են կաթսաները, թաղանթային ընդարձակիչ անոթը, պոմպերը, կոլեկտորները:
3. Կաթսայատան օդափոխությունը նայել -3.20 նիշի օդափոխության նախագծում:

3. ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԱՑՈՒՄ

1. Ջերմային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով T1, T2, T3 և T4 խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄՈՆՏԱԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են էլեկտրոեռակցումային ԳՈՍՍ 10704-91 և ջրագազամուղային ԳՈՍՍ 32-62-82 պողպատյա խողովակներով:
2. Բոլոր խողովակաշարերը մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավիկ փորձարկման:
3. Խողովակաշարերը մոնտաժվում են $I=0,002$ մ/մ թեքությամբ, խողովակաշարերի վերին բարձր կետերից կատարվում է օդի հեռացում, իսկ ներքևի ցածր կետերից՝ ջրի դատարկում:

1.5.9 Ֆոտովոլտային արևային համակարգ

Դպրոցին պատկանող տարածքում 149.6 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի նախագծման համար հիմք են հանդիսացել

1. Տեղանքի հատակագծերը
2. Տեղազնման արդյունքները
3. Տեխնիկական առաջադրանքը

Նախագծով նախատեսվում է 149,6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում մոդուլային կրթահամալիրների տարածքում: Տեղանքում Հորիզոնական ճառագայթումը $=1337$ կՎտ*ժ/մ է:

Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 272 հատ միաբյուրեղային 144 (6x24) կետքիչներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք

միանում են փոխակերպիչների ԱՀԿՈԻ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական էլքային հզորությունը 50 կՎտ է /Եռաֆազ/:

ՖՎ կայանի հենակառուցվածքը մոնտաժվում է նախապես կառուցված երկաթ-բետոնային հիմքերի վրա՝ զողման միջոցով: ՖՎ կայանի հենակառուցվածքը կազմված է հակակոռոզիոն ներկով պատված պողպատե խողովակներից: Փոխակերպիչը և ՓՀՀՏ-ն տեղադրվում են հենակառուցվածքի վրա հատկացված հատվածում: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ:

ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն ենթակայանից սնվող մալուխով էլեկտրականապես միանալու միջոցով:

ՖՎ կայանի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

Արևային կայանի ներտարածքային 0,4կՎ մալուխային ցանցը նախագծված է BB-1,0, ABB-1,0 տիպի մալուխներով, իսկ հաստատուն հոսանքի մալուխային ցանցը նախագծված է BBI -0.66 տիպի մալուխներով՝ տեղադրված կոշտ PVC խոխողովակի մեջ, 0.8մ խորությամբ խրամուղիում և արևային վահանակների հենակառուցվածքի վրա՝ ձգման միջոցով:

Հողանցման և անվտանգության պաշտպանական միջոցներ: Նախագծով ընդունված է TN-S համակարգը: Որպես պաշտանիչ միջոց նախատեսված է իրականացնել տրանսֆորմատորային ենթակայանում գտվող 4 Օհմ դիմադրությամբ հողանցման օջախը: Կայանը կայծակից պաշտպանելու համար նախատեսված է մետաղական հենասյուն, որի վրա տեղադրված է իոննային գեներատորով շանթարգիչ սարքավորում: Շանթարգիչ սարքավորումը պղնձապատ շերտավոր պողպատով միացված է 10 Օհմ դիմադրությամբ հողանցման օջախին:

Համաձայն շանթապաշտպանության CO 153-34,21,122-2003 նորմի դասակարգման, կայանը համարվում է սովորական դասի՝ 3-րդ կատեգորիայի օբյեկտ, իսկ պաշտպանության մակարդակը՝ հենասյան վրա գտնվող շանթարգիչ սարքավորման համար ընտրվել է IV:

2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԵԽՆՈՒՆԴԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ՝ կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի՝ արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման՝ անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Շինարարության պայմանները

“Շինարարության կազմակերպում” բաժինը մշակված է նախագծման տեխնիկական առաջադրանքի հիման վրա համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008 և ընդգրկում է · աշխատանքների կատարման համար ներկայացվող տեխնիկական տվյալներ,

Բաջնի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ նորմատիվային փաստաթղթերը.

- ՀՀՇՆ I-3.01.01-2008 “Շինարարության կազմակերպում”
- N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում
- ՍՆԻՊ 1.04.03-85*՝ “Շինարարության տնտղության և նախակատարման նորմեր շենքերի և կառույցների շինարարությունում”,
- ՍՆԻՊ III-4-80*՝ “Անվտանգության տեխնիկական շինարարությունում”,
- 12.1.046-85 “Շինարարական հրապարակների լուսավորման նորմաներ”,
- ՀՀՇՆ II-7.01-2011 «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԼԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
- ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք,
- Ինժեներա-երկրաբանական հետազննությունների նյութեր:

Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական, տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ՝

Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատման իրականացում,

- գոյություն ունեցող կոմունիկացիաների վերատեղադրում (անհրաժեշտության դեպքում)
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անիվների լվացման կետի տեղադրում (անհրաժեշտության դեպքում),
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում:

Հիմնական փուլ

Հիմնական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները՝

- հիմնական և օժանդակ օբյեկտների կառուցում,
- ներքին և արտաքին կոմունիկացիաների տեղադրում,
- բարեկարգման աշխատանքներ,
- կանաչապատման աշխատանքներ:

2.2 Շինարարության ժամկետները

Շինարարության ժամկետը որոշվել է ըստ հիմնական աշխատանքների ծավալների և դրանց աշխատատարության: Ընդհանուր տևողությունը կազմում է 24 ամիս կամ 624 օրացուցային օր, բանվորների առավելագույն քանակը 44 մարդ, աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2,5, բանվորական ուժի օգտագործման անհամաչափության գործակիցը՝ 1,55:

2.3 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների և բնույթի հիման վրա՝ հաշվի առնելով շինարարության հատուկ պայմանները:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

№ ո/ո	Անվանում	Մակնիշ	Բան.	Ծանոթություն
1	Ավտոկռունկ	KC-65713-1	1	
2	Ինքնաքափ ավտոմոբիլ	MA3 5550	2	
3	Բուլդոզեր KOMATSU	PC 400-7	1	
4	Էլ. եռակցման սարք	CTH 500	1	
5	Շարժական կոմպրեսոր	3MΦ - 55 B	1	ըստ պահանջի
6	Էքսկավատոր Hyundai	170W-7	1	
7	Աշտարակային կռունկ	QTZ-80	1	

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

2.4 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Հողային աշխատանքների իրականացման համար առաջարկվում է HOWO էքսկավատորը, դժվար հասանելի մասերում՝ ձեռքով:

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 26113 մ³

Հետլիցք՝ 7000 մ³

Ավելացած 19113մ³ հողային զանգվածը կտեղափոխվի համայնքի կողմից օրենքով սահմանված վայր /գրությունը կցված է Հավելվածներ բաժնում/:

Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում, փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան:

2.4.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Պահանջարկը որոշվել է աշխատանքների ծավալների, կատարման ժամկետների և Պետշինի խոշորացված նորմերի հիման վրա :

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{է.ի.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 44 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 624 օր

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 44 \times 0.025) \times 624 = 716,3 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.148 \text{ մ}^3/\text{օր:}$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 7000 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

$$U_1 = 7000 \times 0.0015 \times 300 = 3150 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 10.5 \text{ մ}^3/\text{օր}$$

c) Անիվների լվացման և ջրայցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

S₂ – լվացվող ավտոմեքենաների քանակը, 10 մ²,

K₂ – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ³,

T – ժամանակահատվածը օրերով, 450

$$U_2 = 10 \times 0.14 \times 450 = 630 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.4 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4496,3 մ³/շին. ժամ:

Բանվորկան և ԻՏՍՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏՍՍ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Խմելու որակի ջուրը կմատակարարվի տարաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեզում,

պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռագվի որպես շինադր:

2.4.2 Շինմոնտաժային աշխատանքների որակի հսկումը

Շինմոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող միջոցառումների համալիր:

Շինմոնտաժային աշխատանքների որակի արտադրական հսկումը ներառում է .

ա/ կոնստրուկցիաների, շինվածքների, նյութերի և սարքավորումների, աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը;

բ/ արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը;

գ/ շինմոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգն ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը; շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության, բնապահպանական և հրդեհային անվտանգության պահանջներ

- Մինչև աշխատանքների մեկնարկը պետք է կատարված լինեն տվյալ նախագծով նախատեսված անվտանգության միջոցառումները , որոնց ավարտը պետք է ձևակերպված լինի համապատասխան ակտով:
- Մարդկանց գտնվելու համար վտանգավոր գոտիները պետք է ցանկապատվեն, ունենան վտանգի մասին նախազգուշացնող ցուցանակներ:
- Օրվա մութ ժամանակահատվածում շինարարական հրապարակը և աշխատատեղերը պետք է լուսավորված լինեն ըստ ГОСТ 12.1.046-85.

Լուսավորվածությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող էֆֆեկտի: Չլուսավորված տեղամասերում աշխատանքի իրականացումը չի թույլատրվում:

- Աշխատանքների տեղամասերը և աշխատատեղերը պետք է ապահովված լինեն ընկերային և անհատական պաշտպանության անհրաժեշտ միջոցներով, հրդեհամարման առաջնային միջոցներով, կապի, ազդանշանման և

աշխատանքի անվտանգությունն ապահովող այլ միջոցներով՝ համաձայն գործող նորմատիվային փաստաթղթերի և համաձայնագրորի:

- Արգելվում է թողնել կախված, անկայուն, կոնստրուկցիաներ կամ դրանց մասեր:
- Էլեկտրական գործիքների հետ աշխատանքը թույլատրվում է 18-ից բարձր տարիքի անձանց: Էլեկտրաֆիկացված բոլոր գործիքները պետք է գրանցված լինեն հատուկ մատյանում և ունենան հաշվարկային համար: Կիրառելուց առաջ ստուգվում է գործիքի սարքին վիճակը՝ լարերի և բռնիչի մեկուսացումը, աշխատանքային մասի վիճակը, պարապլնթացքում աշխատանքը և այլն: Էլեկտրական լարերի պահպանման գոտում բոլոր էլեկտրաֆիկացված գործիքները պարտադիր հողանցվում են:
- Բանվորները պետք է ապահովված լինեն արտահագուստով, հատուկ կոշիկներով և անհատական պաշտպանության միջոցներով:
- Փոշու առաջացումից խուսափելու կամ առաջացման ժամանակ այն մարելու համար շինարարական աղբը պետք է թրջել ջրով:
- Բեռնակալիչ հարմարանքները և տարան (վերամբարձ կռունկով տեղափոխելու դեպքում) պետք է փորձարկված լինեն անվանական բեռնամբարձությունը կրկնակի անգամ գերազանցող բեռով:
- Աշխատանքի գոտում պետք է ունենալ հակահրդեհային միջոցներ՝ 200 մ² մակերեսին - 1 կոմպլեկտ հաշվարկով:
- Շինարարական աղբը պետք է ժամանակին հեռացվի , արգելվում է աղբի այրումը շինարարական հրապարակում:
- Արգելվում է դիզելային վառելիքի դատարկումը գետնի վրա:

2.5 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՅ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի

մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

3. ՏԱՐԱԾՔԻ ԿԱՆԱՀԱՊԱՏՈՒՄ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ազրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,

- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,

- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,

- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,

- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ազրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատնկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Կանաչապատման աշխատանքներն կհամաձայնեցվեն համայնքապետարանի հետ:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի լիազորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Համաձայն կանաչապատման նախագծի ընդհանուր կանաչապատման մակերեսը կազմում է 11485.46քմ:

Ուսումնասիրելով տեղանքը եվ խորհրդակցելով դենդրոլոգների հետ, տարածքում տեղադրվել են ստորև բերված բույսերի տեսականին համապատասխան քանակներով՝

1.ԹՂԿԻ ՍՐԱՏԵՐԵՎ ԿԱՐՄԻՐ -23 ՀԱՏ

2.ԳՆԴԱՁԵՎ ԻԼԵՆԻ -55 ՀԱՏ

3.ՍՅՈՒՆԱՁԵՎ ԹՈՒՅԱ -82 ՀԱՏ

4.ԲԱՐԴԻ ԱՐԾԱԹԱՓԱՅԼ -67 ՀԱՏ

5.ՍԻԶԱՄԱՐԳ -11485.46 ՔՄ

Ստորև ներկայացվում է կանաչապատման սխեման:

3.1 Կանաչ տարածքի ռոռզման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ռոռզման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ռոռզում՝ $n_6 = 0.006$ մ³/մ²

Ոռռզման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ռոռզվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 11336.22$ մ²,

K – ռոռզման օրական հաճախականությունն է, $K = 2$

t - ռոռզման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 11485.46) \times 2 \times 175 = \underline{\underline{24119.46}} \text{ մ}^3/\text{տարի}$$

4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՆ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Լոռու մարզի Ստեփանավան խոշորացված համայնքի վարչական տարածքում: Լոռու մարզը զբաղեցնում է 3799 քառ. կմ, որն իր մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արևելքից՝ Տավուշի, արևմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները: Լոռու մարզով է անցնում դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ M6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման եւ M3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները, ինչպես նաև մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Մարզում ծովի մակերևույթից ամենաբարձր բարձր կետը Աչքասար լեռան գագաթն է (3 196 մ), ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 375 մ):

Մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ, ունի ոչ հարթ ռելիեֆ, տարածքի մոտ 80% զբաղեցնում են լեռնաշղթաները և խոշոր լեռները: Նրա տարածքով են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը: Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Հարուստ է հիմնականում փայլուն պղնձով: Օգտակար հանածոները ներկայացված են ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ գունավոր մետաղական հանածոներից են նաև արծաթը, մոլիբդենը, ոսկին (շահագործվում է Թեղուտի, Շամլուղի պղնձի հանքավայրը, Մղարթի եւ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

4.2 Տեղամասի ինժեներակրաբանական պայմանները

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը գտնվում է Բազում լեռնաշղթայի հյուսիսային դենուդացիոն լանջերի ստորոտում, Ջորագետի աջակողմյան վտակի ափերին՝ ալուվիալ-պրոլուվիալ դարավանդի սահմաններում:

Տեղամասի ռելիեֆը հարթ է, որոշ թեքությամբ արևելքից արևմուտք, մակերևույթիբացարձակ նիշերը տատանվում են 1607.0-1613.0 մ սահմաններում:

Հողի սառեցման խորությունը՝ 58 սմ /Ստեփանավան/:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է պալեոգենի հրաբխային հաստվածքով՝ անդեզիտներով, տրախիանդեզիտներով, անդեզիտադալիտներով, դրանց տուֆաբրեկչիաներով, տուֆակոնգլոմերատներով և տուֆաավազներով, և չորրորդական բազալտներով, անդեզիտաբազալտներով, անդեզիտներով, ծածկված չորրորդական և ժամանակակից էլուվիալ, դելուվիալ, ալուվիալ-պրոլուվիալ կավային, ավազային, ճալաքարա-կոպճային, խճա-խճավազային գոյացումներով:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը վերնից-ներքև ներկայացված է հետևյալ գրունտների շերտերով (տես լիթոլոգիական կտրվածքները)։

Շերտ 1 - բուսահող ավազակավային մուգ մոխրագույն, կոպիճով 5-10%, տեղ-տեղ ծածկված խճային լիքքագրունտով: Շերտը տեղամասում տարածված է ամենուրեք, 0,5-1,0 մ հզորությամբ:

Շերտ 2 - ավազակավ դեղնաշագանակագույն, մանր ճալաքարով ու կոպիճով 10-15%, խոնավ, ձիգ- և փափուկալաստիկ թանձրության: Շերտը տեղամասում տարածված է ամենուրեք, 2,5-4,0 մ հզորությամբ:

Ժամանակակից ալուվիալ-պրոլուվիալ գոյացումներ:

Շերտ3 - ճալաքար կոպիճով, միջին և թույլ հղկված, ավազակավի և կավավազի լցանյութով 25%, կավային գրունտի ենթաշերտերով /10-15 սմ/, ջրհագեցած:

Շերտը տեղամասում տարածված է ամենուրեք, տեղ-տեղ ավազակավի ոսպնյակներով /մինչև 0,6 մ/, 4,0 մ բացված հզորությամբ:

Ժամանակակից ալուվիալ-պրոլուվիալ գոյացումներ:

Ստորգետնյա (գրունտային) ջրերը տեղամասում փորված հորատանցքերով բացահայտվել են 5,2-4,6 մ խորությունների վրա:

Գրունտային ջրերի մակերևույթն, ըստ հորատանցքերի տվյալների, ունի հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ընդհանուր թեքություն: Մակարդակի բարձրացումը սեզոնային տատանումների ժամանակ կարող է կազմել 0.5 մ ֆիքսված մակարդակից:


Նախագծվող շենքի հիմքերի կայունության վրա բացասաբար ազդող Ֆիզիկաերկրաբանական պրոցեսներ ու երևույթներ տեղամասում չեն դիտվել:

4.3 Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների

և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ 2020թ. Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (1-3-րդ գոտիականության): Հատկապես մարզի կենտրոնական մասը (Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան) քաղաքներով առավել զգայուն են 9 և ավելի ուժգնությամբ երկրաշարժերին:

Գծապատկեր 1



4.4 Կլիմա

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ, չափավոր ցուրտ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական ցուրտ ձմեռներով՝ կայուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ:

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Գործունեության տարածքի Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Տաշիր համայնքի համար, որպես խոշորացված համայնք:

Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2024թ. հունվարի 15-ի N03-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22.01.2024 փաստաթղթից:

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
25. Ատեփանավան	-3.6	-2.5	1.1	6.9	11.4	14.6	17.5	17.3	13.7	8.7	3.1	-1.5	7.2	-30.7	36.8

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
25. Ատեփանավան	69	70	71	72	76	78	77	75	76	76	74	71	74	69	55	77	62

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
25.Ստեփանավան	21	27	42	69	114	122	73	56	48	47	34	19	672	143	529
	36	54	37	31	103	63	53	51	41	39	32	30	103		

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Մնացորդի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
32.Ստեփանավան	հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2.8	ՀվԱրմ	1.6	ՀվԱրմ	3.9
		2.0	1.3	1.5	2.0	3.0	3.9	2.8	2.2						
	ապրիլ	2	3	11	10	6	25	34	9	45	2.0				
		2.2	1.4	1.6	1.9	2.2	3.1	2.6	2.2						
	հուլիս	2	3	13	10	4	19	39	10	61	1.1				
		1.5	1.1	1.4	1.4	1.4	1.6	1.8	1.5						
	հոկտեմբեր	2	3	12	10	5	24	37	7	59	1.3				
		1.7	1.3	1.4	1.4	1.6	2.2	2.2	2.0						

4.5 Օդային ավազան

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ

գործընթացների ժամանակ: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ համեմատությամբ: Համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայք էջում՝ 2024թ. եռամսյակային տեղեկագրերում բացակայում է Նորաշեն բնակավայրի օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը: Ուստի ներկայացվում է.

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայք էջի ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» օդի ֆոնային կոնցենտրացիաներն են.

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Կաթնագոլբյուր բնակավայրի բնակչության թվաքանակը կազմում է մինչև 10000 մարդ:

4.6 Ջրային ռեսուրսներ

Լոռու մարզն առանձնանում է ջրագրական խիտ ցանցով, որը պայմանավորված է տարածքի երկրաբանական և ջրաերկրաբանական կառուցվածքով, ռելիեֆի առանձնահատկություններով, մթնոլորտային առատ տեղումներով: Մարզի խմելու ջրի աղբյուրները ունեն բարձր որակական հատկանիշներ: Մարզի տարածքում հոսում են 1356 գետեր և գետակներ, որոնք օգտագործվում են էներգետիկ և ոռոգման նպատակներով:

Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրառատ լեռնային Դեբեդ գետը (154կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով: Գետի ափին կառուցվել է «Ձորագետ հիդրո» ՀԷԿ-ը:

Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային աղբյուրներով: Մարզում առկա է մեկ ջրամբար (Մեծավանի ջրամբար) շուրջ 5 մլն/մ խորանարդ տարողությամբ:

Հայաստանի հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման համաձայն՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար:

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Համաձայն կազմակերպության կողմից 2024թ. 1-ին եռամսյակի տեղեկագրի՝ Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Սպիտակ քաղաքից ներքև՝ հունվար և մարտ ամիսներին «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև երեք ամիսների ընթացքում՝ «վատ» որակ (5-րդ դաս): Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Ձորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հունվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվարին՝ «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Սարատովկա գյուղից ներքև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Մարց գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին և

մարտին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Ախթալա գետի ջրի որակը գետաբերանում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Նախատեսվող գործունեության տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան:

4.6.1 Հողեր, էրոզիա և հողի աղտոտում

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251052.7հա (Մարզի տարածքի 66%), որից վարելահողերը՝ 42089.4հա (16.8%):

Համաձայն Լոռու մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի՝ 2022թ. հունիսի 1-ի դրությամբ ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 0844.0 հա, որից՝ վարելահող 41977.1 հա: Հողատարածքները կազմում են 9554 հա, որոնց ռոտզման աշխատանքները իրականացվում են 4 մեծ միջտնտեսային ջրանցքների՝ Նալբանդի մեծ ջրանցքի, Կիրովի Լոռու մայր, Այրում-Ճաճկան մայր ջրանցքների, ինչպես նաև այլ ներտնտեսային ռոտզման ցանցերի միջոցով:

Համաձայն ՀՀ-ում վերաբերյալ հողերի գնահատման աստիճանի, ըստ հողային ծածկույթի գոտիականության, Լոռու մարզը մտնում է Հյուսիս-արևելյան գոտու մեջ, որտեղ 1300-2450մ բարձրությունների վրա գերակշռում են սևահողերը, անտառային գորշ հողերը:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Սևահողերում հումուսի պարունակությունը տատանվում է 6-8 • սահմաններում: Հումուսի բաղադրությունում գերակշռում են հումինաթթուները, Chթ:Cֆթ հարաբերությունը հասնում է 1.89-ի:

Տարածաշրջանում կլանող համալիրը հազեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.18-0.27%), ֆոսֆորական թթվով (0.17-0.23%) և կալիումով (մոտ 1.9%):

Մինչև 900մ բարձրությունների վրա՝ բաց լեռնաշաղկանակագույն հողերը, լեռնանտառային մասերը: Լեռնաշագանակագույն հողերն ունեն ավազային, ավազակավային, կավաավազային մեխանիկական կազմ, խտությունը տատանվում է 1,22-1,26 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,57-2,61 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 51,7-52,7%, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 25,3-29,0% սահմաններում: 900 մ-ից ավելի բարձրությունների վրա ընդգրկում է Լոռու մարզի

լեռնաանտառային մասերը: Հողածածկույթը կազմում են տիպիկ և մուգ լեռնաշագանակագույն ու կարբոնատային լեռնաանտառային դարչնագույն հողերը:

Հողերն ունեն ավազակավային, ավազային, կավավազային մեխանիկական կազմ, խտությունը տատանվում է 1,2-1,26 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,61-2,63 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 52,0-54,0 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 26,9-29,0 % սահմաններում:

Գետահովտադարավանդային հողերն ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը հասնում է 1.8-ից մինչև 4.36%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (մոտ 18.4 մգ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Լոռի-Փամբակ գոտու 1500մ և ավելի բարձրությունների վրա գտնվում են մարզի անտառագուրկ տարածքները՝ կարբոնատային և կրազրկված լեռնային սևահողերով:

Հողերն ունեն կավավազային և կավային մեխանիկական կազմ, խտությունը տատանվում է 1,18-1,21 գ/սմ³ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,61-2,62 գ/սմ³ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,8-54,8 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 34,0-36,7 % սահմաններում:

Լոռի-Փամբակ գյուղատնտեսական գոտում, որի մեջ է մտնում նաև Ստեփանավանի վարչական տարածքը, բաժանվում են լեռնաանտառային (մինչև 1500 մ) և լեռնատափաստանային (1500 մ-ից բարձր) հողատիպերը:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գհահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Հողերի որակի գհահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզերի և քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Մարզ/Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
<i>Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ</i>							
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

4.6.2 Կենսաբազմազանություն

Համաձայն Լոռու մարզի 2017-2025թթ. ռազմավարական զարգացման ծրագրի՝ մարզում գերակշռում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարզագետինները: Ըստ Ա. Լ. Թախտաշյանի՝ ՀՀ տարածքի հյուսիսային հատվածն ընկած է Կովկասյան բուսաաշխարհագրական մարզի տարածքում, որտեղ բնորոշ են բուսականության մեզոֆիլ (խոնավասեր) տեսակները:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101,205հա, որից անտառածածկ է 86 հազ. հա: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները: Հրդեհները բացասաբար են ազդում մարզի բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Բուսական աշխարհ. Ըստ Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954) նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Լոռու ֆլորիստիկ շրջանում, ուր բուսականությունն աչքի է ընկնում համակեցությունների բազմազանությամբ, տեսակային հարուստ կազմով: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ: Լոռու մարզը հարուստ է անտառներով, որի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ: Համաձայն շրջակա միջավայրի նախարարության «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և գործողությունների պետական ծրագրի»՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից Լոռու մարզում հաշվառված է 47 տեսակ, էնդեմիկների քանակը՝ 7: Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Լոռու մարզի սարահարթի մարգագետիններում առկա են ճահճային գոտիներ: Անտառի հիմնական ծառատեսակը հաճարենի արևելյանն (*Fagus orientalis* Lipsky) է, կաղնի արևելյան (*Quercus macranthers* Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացական (*Q. iberica* Stev.), թխկի վրացական (*Acer ibericum* M. Bieb.), լորենի կովկասյան (*Tilia caucasica*), բոխի սովորական (*Carpinus betulus* L.): Տարածաշրջանի բնական բուսածածկի տիպերից հանդիպում են՝ ամենուրեք Բանգի սև (*Hyoscyamus niger*), Հազարատերևուկ սովորական (*Achillea millefolium*), Ոգնագլխիկ սովորական (*Echinops ritro*), Անանուխ Երկարատերև (*Mentha longifolia*), Եղինջ երկտուն (*Urtica dioica*), Կատվալեզու եռաբաժան (*Bidens tripartita*), Ջղախոտ մեծ, Ջղախոտ նշտարածն (*Plantago major*, *Plantago lanceolata*), Ավելուկ գանգուր (*Rumex crispus*), Երեքնուկ կարմիր Երեքնուկ սողացող (*rntblium hybridum*, *Infolium repens*), Չիաձետ դաշտային (*Equisetum arvense*), Սրոհունդ խոցված (*Hypericum perforatum*), Դանդուռ բանջարանոցային (*Portulaca oleraceae*), Իշառվայա դեղատու (*Melilotus officinalis*), Ճարճատուկ սովորական (*Cichorium intybus*), Տերեփուկ կապույտ (*Centaurea cyanus*), Մոշենի թխակապույտ (*Rubus caesius*), Խատուտիկ դեղատու (*Taraxacum officinalis*), Մասրենի շնային (*Rosa canina*), Ուրց Կոչիի (*Thymus kotschyanus*), Սիբեխ սովորական (*Falcaria vulgaris*), Ծոսապաշար սովորական (*Capsella bursa pastoris*), Մատիտեղ պարսկական (*Polygonum persicaria*), Օշինդր դառը (*Artemisia absinthinum*), Փիփերթ արհամարհված (*Malva neglecta*), Մատիտեղ թոչնային (*Polygonum avicularc*) և այլն: Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի լեռնաշղթաների (Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց) գառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը:

Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (*Stipa pennata* L.), սեզ սողացող (*Elytridia repens* L.), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis* L.), շուղախոտ մարգագետնային (*Festuca pratensis* Huds.), կծմախոտ (*Bothriochloa ischaemum* L.), չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազ ասեղնային (*Astragalus picnophyllus* Stev.) և զանազան թփերը, մացառները:

Լոռու ֆլորիստական շրջանի սևահող ալրային կարբոնատային հողերի վրա զարգացած է տափաստանային բուսականության բնորոշ բուսատեսակները՝ տարախոտահացազգային տեսակների մասնակցությամբ: Դեղաբույսերից տարածում ունեն առյուծագի արտային (*Leonurus cardiaca*) և դրախտածառ (*Cotinus coggygria*), ազնվամորի սովորական (*Rubus idaeus*), բոինչ սովորական (*Viburnum opulus*), գետնամորի անտառային (*Fragaria vesca*), նոնենի սովորական (*Punica granatum*), ջրապղպեղ (*Polygonum hydropiper*), խնկածաղիկ սովորական (*Origanum vulgare*), կտակենի սև (*Sambucus nigra*), մանուշակ դաշտային (*Viola arvensis*), տատրակ (*Tussilago farfara*): ՀՀ Կարմիր Գրքում գրանցված են պահպանության կարիք ունեցող ֆլորայի 327 տեսակ, որոնցից են՝ Բանպոս Բրաունի (*Polystichum braunii*), Նետախոտ նետախոտանման (*Sagittaria sagittifolia* L), Պսեֆելլուս դեբեդի (*Psephellus debedicus*), Բոշխ բոհեմական (*Carex bohemica* Schreb), Թրաշուշան Ջավախքի (*Gladiolus dzhavakheticus* Eristavi), Ջրաշուշան սպիտակ (*Nymphaea alba* L.), Մրտավարդ Կովկասյան (*Rhododendron caucasicum* Pall.), Ճոճոուկ մազոս (*Cerastium capillatum*), Հիրիկ Սիբիրյան (*Iris sibirica* L), Նեղտերև Դոդոնի (*Chamaenerion dodonaei*), Սոխ Օլթի (*Allium oltense* Grossh), Սոխ ժայռի (*Allium rupestre* Steven), Թաղաղու Ղրիմյան (*Asphodeline taurica* (Pall.) Kunth) և այլ տեսակները: Մնկերից՝ Հովանցասունկ աղջկական (*Macrolepiota puellaris*), Թիակիկ սովորական (*Ithyphallus impudicus*), Աստերոֆորա անձրևային (*Asterophora lycoperdoides*), Ճանճասպան կարմիր (*Amanita muscaria*), Կոնասունկ փաթիլաոտիկ (*Strobilomyces strobilaceus*) և այլն:

Ուսումնասիրվող և հարակից տարածքները, մարդու գործունեության արդյունքում, բավականաչափ յուրացված են, բացակայում են ինչպես հազվագյուտ էկոհամակարգերը, այնպես էլ կենդանիների հազվագյուտ տեսակները, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումներ չի նախատեսվում: Կենդանական աշխարհ. Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և բնության տարրերի բազմազանության, Լոռին առանձնանում է իր կենդանական աշխարհի բազմազանությամբ: Լոռու կենդանական աշխարհի շատ տեսակներ ընդհանուր են այլ մարզերի համար: Մակայն հանդիպում են նաև

կենդանիների այնպիսի տեսակներ, որոնք հատուկ են միայն Լոռու մարզին: Լեռնատափաստանային գոտու կենդանական աշխարհը բնորոշ է հատկապես կրծողներով, որոնցից լան տարածում ունեն` դաշտամուկը (*Arvicolinae*), ճագարամուկը (*Dipodidae*), կույր մուկը (*Mus caecus*), համստերը (*Cricetinae*): Տարածված են նաև կզաքիսը (*Saltus martes*), գետնասկյուռը (*Spermophilus citellus*), գորշ գայլը (*Canis lupus*), աղվեսը (*Vulpes*): Թռչուններից տարածված են` բաղը (*Anatidae*), գորշ կաքավը (*Perdix cinerea*), շիկահավը (*Erithacus rubecula*), ճնճողուկը (*Passeridae*), լորը (*Coturnix*), կաքավը (*Perdix*), արտույտ անտառային (*Lullula arborea*), ծիծեռնակը (*Hirundinidae*), կաչաղակը (*Pica*), արծիվը (*Aquila*), բազեն (*Falco*) և այլն: Մերձալպյան և ալպյան գոտիներում հանդիպում են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ` աղվես, գայլ, նապաստակ (*Leporidae*), աքիս (*Mustella nivalis*), դաշտամուկ սովորական (*Arvicolinae peculiaris*), քարաբնակ կզաքիս (*saltus martes*): Կաթնասուններից հանդիպում են գայլ, աղվես, քարակզաքիս, ջրային առնետ, թռչուններից` կոնչան բաղ, սուլող մրտիմն, չքչքան մրտիմն, կարմրագլուխ սուզաբաղ, փոփուլավոր սուզաբաղ, սևփարփար, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կոցարներ, տնային ճնճողուկ, մոխրագույն ագռավ: Երկկենցաղներից տարածված է լճագորտը, փոքրասիական գորտը, ձկնատեսակներից` լոթոն, կարմրախայտը, կարասը: ՀՀ Կարմիր գրքում գրանցված Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից Լոռու մարզում գրանցված են 54 տեսակ, որից անողնաշարավոր կենդանիներ` 7, ողնաշարավոր կենդանիներ` 47: Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են` Ստեփանավանյան առվակային գնայուկ (*Duvalius stepanavanensis Khnзорian*), Մթնաշաղային կապտաթիթեռ (*Maculinea nausithous*), թռչուններից` Գառնանգղ (Մորուքավոր անգղ)/*Gypaetus barbatus*), Գիշանգղ (*Neophron percnopterus*), Սպիտակագլուխ անգղ (*Gyps fulvus*), Փոքր ենթարծիվ (*Aquila pomarina*), Վայրի հնդկահավ (Ուլար) (*Tetraogallus caspius*), Մոխրագույն կռունկ (*Grus grus*), Ներկարար (*Coracias garrulus*), Կովկասյան մարեհավ (*Tetrao mlokosiewiczi*), Տարգալակտուց (*Platalea leucordia Linnaeus*), կաթնասուններից` Շելկովնիկովի կուտորա (*Neomys schelkovnikovi Sat.*), Գորշ արջ (*Ursus arctos Linnaeus*), Անտառակատու (*Felis silvestris Schreber*), Փոքրասիական գետնասկյուռ (*Spermophilus xanthoprymnus Bennet*) և այլն: Էնդեմիկ տեսակ է հայկական ծղրիդ (*Montana armeniaca Rme*), սողուններից` Դալի մողես (*Darevskia dahli*), Սպիտակ խխունջ (*Gyraulys albus*), Փոքրասիական մողես (*Parvilacertaparva Boulenger*), Սպիտակափոր մողես (*Darevskia unisexualis*), Հայկական լեռնատափաստանային իծ (*Vipera*

(Pelias) eriwanensi)և այլն: Լոռու սարահարթի լճակներում հանդիպում է մոխրագույն սուզակ, որը քիչ տարածված և կրճատվող տեսակ է:

4.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Լոռու մարզում առկա են ընդհանուր՝ 17576հա մակերեսով կան 3 արգելավայրեր՝ «Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»: Առկա է 1 բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ: Տարածքում հայտնի են

- Գյուլագարակի ռելիկտային սոճու անտառներ
- Մարգահովիտի մեզոֆիլ անտառներ
- Մրտավարդենու (ռելիկտային մրտավարդի կովկասյան տեսակը)
- Վանաձորի բուսաբանական այգի
- Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ
- Վանաձորի «Սարուխանյան Ժ. անվան» դենդրոպարկ:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

4.7.1 Բնության հուշարձաններ

Լոռու մարզի բնության հուշարձանների ցանկ

1.	«Բազալտանման ապարների (Դիաբազների) գոլավոր դայք»	Լոռու մարզ, Ալավերդի քաղաքային համայնք, Լավար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լեհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2.	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռու մարզ, Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3.	«Ձորագետի հրային ներծայթուկ»	Լոռու մարզ, Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4.	«Թռչկան» ջրվեժ	Լոռու մարզ, Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
5.	«Դսեղի Ծովեր» լիճ	Լոռու մարզ, Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև գոգավորությունում
6.	«Շամլուղի լճակ»	Լոռու մարզ, Շամլուղ գյուղական համայնք
7.	«Օձի պորտ»	Լոռու մարզ, Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք

4.8 Պատմամշակութային հուշարձաններ

Այս հոդվածը ներկայացնում է Լոռու մարզի Կաթնաջուր գյուղի պատմության և մշակութային հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 6 հուշարձան (6 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.
Գերեզմանոց	19-20 դդ.	գյուղի ամ եզրին	—	7.52/1	S
Գյուղատեղի «Ղոթուր»	միջնադար	գյուղից 4-5 կմ	—	7.52/2	Հ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.
		հվ			
Եկեղեցի	1866 թ.	գյուղի մեջ	—	7.52/3	Հ
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1967 թ.	գյուղի մեջ	—	7.52/4	S
Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1980 թ.	գյուղի մեջ	—	7.52/5	S
Հուշարձան Ստեփան Շահումյանին	1961 թ.	գյուղի մեջ	—	7.52/6	Հ

4.9 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից	IV	9120060101004	1200 մ ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	9մ ³
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	19113մ ³

Շինարարական աղբը շինհրապարակում չի կուրսակվելու, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Կրթահամալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

5.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- քանդման աշտատանքներ
- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

